Հայտահրավեր
(կազմակերպության ընտրություն)

Հայաստանի Հանրապետություն

<<Կրթության բարելավում>> ծրագիր

Ֆինանսավորման աղբյուր՝ ՎԶՄԲ Վարկ No. 5387-AM
ՄԶԸ Փոխառություն No. 8342-AM
Ծրագրի համարը՝ P130182

Առաջադրանքի անվանումը. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական կարողությունների հզորացման համար նախատեսված նոր տվյալների մշակման կենտրոնի (Data centre) նախագծման և սերվերների տեղադրման աշխատանքներ

Հղում՝ ԳՊ-ի տող 1.3.2 «Խորհրդատվության էջ»

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում <<Կրթության բարելավում>> ծրագրի իրականացման համար և դրամական միջոցների մի մասը նախատեսել է օգտագործել խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով:

Խորհրդատվական ծառայությունների (Ծառայություններ) շրջանակը ներառում է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական կարողությունների հզորացման համար նախատեսված նոր տվյալների մշակման կենտրոնի (Data centre) նախագծման և սերվերների տեղադրման աշխատանքներ:
Ընտրված կազմակերպությունը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները.

Փուլ 1 (Տևողությունը 3 ամիս)

- Ուսումնասիրել գործող կենտրոնական կապի հանգույցը և վերանայել առկա տեղեկատվական համակարգերը՝ ԿՏԱԿԻ նոր գործառույթների իրականացման նպատակով կարիքների գնահատման համար
- Ուսումնասիրել ԿՏԱԿ-ի նոր գրասենյակում սերվերային սենյակի և աշխատանքային տարածքների ընտրության արդյունավետությունը, ինչպես նաև օպտիկական մալուխների անցկացման հնարավորությունը:

- Մշակել նոր տվյալների մշակման կենտրոնի (Data center) նախագիծ՝ ԿՏԱԿ-ի գործող և նոր գործառույթներին համապատասխան:
- Մշակել մանրամասն տեխնիկական առաջադրանք անհրաժեշտ սարքավորումների գնման նպատակով:
- Ըստ անհրաժեշտության աջակցել սարքավորումների գնման գործընթացի իրականացմանը:

Փուլ 2(Տևողությունը 1 ամիս)

- Ըստ անհրաժեշտության աջակցել սարքավորումների գնման նպատակով ընտրված մատակարարի հետ կնքված պայմանագրի իրականացմանը:
- Նոր տվյալների մշակման կենտրոնում ձեռքբերված սարքավորումների տեղադրում և գործարկում:
- Համակարգի թեստավորում:

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ ՊՀ-ն հրավիրում է իրավասու կազմակերպություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ)՝ ներկայացնելու իրենց հետաքրքրությունը տվյալ առաջադրանքը կատարելու համար: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն այնպիսի տեղեկատվություն, որը ցույց կտա ծառայությունները կատարելու համար համապատասխան որակավորման և փորձի առկայությունը:

Կարճ ցանկում ընդգրկվելու չափանիշներն են.

- **Կազմակերպության ընդհանուր փորձը– առավելագույնը 30 միավոր**

  Տվյալների մշակման համակարգերի տեխնիկական պահանջների մշակման նվազագույնը 1 տարվա փորձ:

- **Կազմակերպության հատուկ փորձը - առավելագույնը 40 միավոր**

  Տվյալների մշակման կենտրոնների նախագծման, տեղակայման, գործարկման և կառավարման նվազագույնը 1 տարվա փորձ:

- **Աշխատակազմի որակավորում և հմտություններ - առավելագույնը 30 միավոր**

  Աշխատակազմում պետք է լինի.

- նվազագույնը 1 մասնագետ, որն ունի Cisco Certified Network Associate (CCNA) որակավորում (հավաստագիրը ներկայացնել),
- նվազագույնը 1 մասնագետ, որն ունի IT Security Certification որակավորում(հավաստագիրը ներկայացնել):

Հետաքրքրված կազմակերպությունների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ «Խորհրդատուների ընտրություն և նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքում ՎԶԵԲ-ի վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի Փոխառուների կողմից հունվար 2011թ. («Խորհրդատուների ուղեցույցներ»), որը սահմանում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը՝ շահերի բախման վերաբերյալ:

Կազմակերպությունը կընտրվի կազմակերպության որակավորման հիման վրա ընտրության(CQ) եղանակով՝ Խորհրդատուների ուղեցույցի համաձայն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ստորև նշված հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին՝ հետևյալ ժամերին 11:00 - 13:00 և 14:00 - 17:00 :

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ մինչև 2018թ. հունիսի 27-ը ներառյալ, (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) մինչև 17:00 տեղական ժամանակով, հետևյալ հասցեով.

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ ՊՀ

ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 , 0070, Հայաստան

Էլ. Փոստ. info@cfep.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել վերը նշված էլեկտրոնային փոստով կամ զանգահարել՝

(+37410) 57-56-90 (63) – ՏՀՏ ենթաբաղադրիչի ղեկավար Հարություն Ղարիբջանյանին

(+37410) 57-56-90 (27) – գնումների գլխավոր մասնագետ Վարդան Պողոսյանին

հեռախոսահամարներով: